Հավելված N 544
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԵՎ ՔԱՐԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ռազմավարական ոլորտների վարչության (այսուհետ՝ Վարչություն) թանկարժեք մետաղների և քարերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ՝ (ծածկագիրը՝ 23-32.25-Մ4-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան,Կենտրոն վարչական շրջան, Մ. Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. մասնակցում է մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների քաղաքականության ձևավորման ու իրագործման առաջարկների մշակման աշխատանքներին.
2. մասնակցում է մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների բնագավառների զարգացմանն ուղղված պետական ծրագրերի նախագծերի մշակման աշխատանքներին.
3. մասնակցում է մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների ոլորտի արդյունաբերության գերակա ուղղությունների որոշման համար առաջարկությունների մշակման աշխատանքներին.
4. մասնակցում է թանկարժեք քարերի և մետաղների արտադրության քաղաքականության մշակման աշխատանքներին.
5. մասնակցում է թանկարժեք քարերի և մետաղների արտադրության քաղաքականության ձևավորման ու իրագործման առաջարկների մշակման աշխատանքներին.
6. մասնակցում է թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի բնագավառում

քաղաքականության մշակման աշխատանքներին.

7. մասնակցում է սև և գունավոր մետաղների թափոնների և ջարդոնի շրջանառության հիմնախնդիրների վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքներին:

Իրավունքները՝

• օգտվել համապատասխան մարմիններից թանկարժեք քարերի և մետաղների, ինչպես նաև մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների բնագավառների ռազմավարական փաստաթղթերի ու իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններից.

• օգտվել թանկարժեք քարերի և մետաղների, ինչպես նաև մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների բնագավառների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպություններից ստացված անհրաժեշտ տեղեկատվությունից.

• օգտվել զարգացած և զարգացող երկրների թանկարժեք քարերի և մետաղների արդյունաբերության բնագավառների քաղաքականության և ներդրումների ներգրավման համար կիրառվող միջոցների ու մոտեցումների վերաբերյալ շահագրգիռներ մարմիններից ստացված անհրաժեշտ տեղեկատվությունից.

• ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից ստացված թանկարժեք քարերի և մետաղների արդյունաբերության բնագավառների քաղաքականության և ներդրումների ներգրավման համար կիրառվող միջոցների ու մոտեցումների վերաբերյալ պարզաբանումներ և բացատրություններ.

• օգտվել դիվանագիտական կապուղիներով արտասահմանյան երկրներից ստացված թանկարժեք քարերի և մետաղների, ինչպես նաև մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների ոլորտների քաղաքականությունների, ներդրումների ներգրավման, ներդրումների պաշտպանության համար կիրառվող միջոցների ու մոտեցումների վերաբերյալ տեղեկատվությունից:

Պարտականությունները՝

• աջակցել թանկարժեք քարերի և մետաղների արդյունաբերության ոլորտում ներդրումների ներգրավման և ներդրումային քաղաքականության մշակման և միջնաժամկետ վերանայման, համապատասխան իրավական ակտերի և դրանց նախագծերի մշակման համար անհրաժեշտ աշխատանքներին.

• աջակցել թանկարժեք քարերի և մետաղների, ինչպես նաև մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների ոլորտների քաղաքականությունը, անհրաժեշտ վերլուծությունների կատարման և առաջարկությունների մշակման աշխատանքներին.

• նախապատրաստել թանկարժեք քարերի և մետաղների, ինչպես նաև մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների բնագավառներին առնչվող իրավական ակտեր, մշակել

առաջարկություններ.

• նախապատրաստել թանկարժեք քարերի և մետաղների, ինչպես նաև մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների բնագավառներում ներդրողների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների դասակարգման, վերլուծության, արձագանքման, առաջարկություններ.

• աջակցել զարգացած և զարգացող երկրների թանկարժեք քարերի և մետաղների, ինչպես նաև մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների բնագավառների ներդրումային քաղաքականության, ներդրումների ներգրավման համար կիրառվող միջոցների և մոտեցումների վերլուծություն և համապատասխան առաջարկությունների մշակման աշխատանքներին.

• աջակցել թանկարժեք քարերի և մետաղների, ինչպես նաև մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների ոլորտների ֆորումների, համաժողովների խորհրդակցությունների կազմակերպման աշխատանքներին.

• նախապատրաստել Նախարարության համապատասխան ստորաբաժանումներին և այլ շահագրգիռ մարմիններին թանկարժեք քարերի և մետաղների, ինչպես նաև մետաղական՝ այդ թվում նաև ազնիվ մետաղների ոլորտների օտարերկրյա ներդրումների վերաբերյալ հաշվարկ-տեղեկանքներ.

• նախապատրաստել համապատասխան մարմինների կամ անհատների կողմից ներկայացված հարցադրումների վերաբերյալ առաջարկություններ.

• մշակել իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, ինչպես նաև մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցներ.

• նախապատրաստել առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախագծեր:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն

4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ժամանակի կառավարում
2. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
3. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: